



ՍԵՐԺԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

*ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

**«ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԳԵՄ
ՈՒՂՂՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ»
ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 32-ՐԳ ԳԼԽՈՒՄ
ԱՌԿԱ ԲԱՑԵՐԸ, ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ
ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ԱՌԱՋԱՑԱԾ
ՎԻՃԱՀԱՐՈՒՅՑ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ**



«ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2013 թվականի մայիսի 21-ին ընդունված օրենքով զինվորական հանցակազմերում կատարվեցին բազմաթիվ փոփոխություններ, որոնք բացի դրական կողմերից, ունեին նաև օրենսդրական լուրջ բացեր և հակասություններ՝ ինչպես զինվորական հանցագործությունները ճիշտ որակելու, միմյանցից և կարգապահական զանցանքներից սահմանազատելու, այնպես էլ պատիժների խստացման հարցում: Մասնավորապես, դրանք հիմնականում հանգում են հետևյալին՝

1. Զինվորական ենթակայության կարգի և զինձառայողների կանոնադրային փոխհա-

րաբերությունների դեմ ուղղված հանցակազմերի օրենսդրական փոփոխությունների արդյունքում (հոդվածներ 356-358.1) առաջացել են հետևյալ հարցերը.

ա) զինձառայողի առողջությանը թեթև վնաս (կարճատև քայքայում) պատճառելու համար նախատեսվել է պատիժ միայն ազատազրկման ձևով՝ 4-8 տարի ժամկետով, ինչն անարդարացի է, ակնհայտ խիստ և ոչնչով չհիմնավորված: Մինչև փոփոխությունները գործող օրենքն այդ արարքների համար պատիժ էր սահմանում կարգապահական գումարտակում պահելու ձևով կամ ազատազրկում՝ մինչև 2, 3 կամ 5 տարի ժամկետով (ազատազրկման նվազագույն չափը 3 ամիս է):

Համեմատության համար նշենք, որ քաղաքացուն թեթև վնաս պատճառելու համար (հոդված 117) որպես պատիժ նախատեսված է տուգանք կամ կալանք՝ առավելագույնը 2 ամիս ժամկետով: Իսկ առողջությանը դիտավորությամբ ծանր վնաս պատճառելու համար (հոդված 112) նախատեսված է պատիժ՝ ազատազրկում՝ 3-7 տարի ժամկետով:

Արդյունքում, զինձառայողին թեթև վնաս հասցնելը պատժվում է ավելի խիստ (նվազագույնը՝ 4 տարի), քան, օրինակ, դանակահարությունը՝ ծանր վնասի ելքով (նվազագույնը՝ 3 տարի):

բ) Ստեղծված իրավիճակում դատարանները, որպես հարցի արդարացի լուծում, զինձառայողների նկատմամբ ազատազրկման



ձևով նշանակված 4 տարի ժամկետով պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ հաճախ պայմանականորեն չեն կիրառում՝ սահմանելով փորձաշրջան գործառնախ պայմաններում: Մինչդեռ, զինվորական դատախազները, որպես կանոն, բոլոր դատական ակտերի դեմ բողոքներ են բերում՝ պատճառաբանելով, որ զինծառայողների ուղղումը և հանցագործությունների կանխումը հնարավոր է միայն նշանակված պատիժը փաստացի կրելու պայմաններում: Բողոքների գերակշիռ մասը մերժվում է:

գ) Ձինծառայողի առողջությանն առանց կարճատև քայքայման վնաս պատճառելը (ծեծ կամ այլ բռնի գործողություններ) 360-րդ հոդվածի առկայության պայմաններում (զինծառայողին վիրավորանք հասցնելը) խնդիրներ է առաջացնում այդ արարքների միատեսակ որակման հարցում: Այսպես, մի դեպքում ծեծը որակվում է 358-րդ կամ 358.1-րդ, մյուս դեպքում՝ 360-րդ հոդվածով, ինչով խախտվում է օրինականության և օրենքի առջև հավասարության սկզբունքը:

Հակասության մեջ են գտնվում նաև 359-րդ և 360-րդ հոդվածները, բանի որ ծեծը կամ բռնի այլ գործողությունները, ծարրուծանակի ենթարկելը կամ հալածելը կարող են պատասխանատվություն առաջացնել թե 359-րդ, թե 360-րդ հոդվածներով (այդ պատճառով քննչական և դատական պրակտիկայում միատեսակ մոտեցում չկա):

2. Ձինծառայողի պատիվն ու արժանապատվությունն անպարկեշտ ձևով ստորացնելը (360-րդ հոդված) նախկին խմբագրությանը պատասխանատվություն էր առաջացնում, երբ դա կապված էր զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ:

Փոփոխությունների արդյունքում վիրավորանք հասցնելը, որը կապված չէ զինվորական ծառայության պարտականությունների հետ, քրեականացվել է և համարվում է զինվորական հանցագործություն: Մինչդեռ քրեական օրենսգրքի 136-րդ հոդվածը (վիրավորանքը) ապարքեականացվել է՝ հակասահմանադրական լինելու պատճառաբանությամբ:

Միևնույն ժամանակ, ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքում զինծառայողներին վիրավորանք հասցնելը՝ որպես կարգապահական զանցանք, նախատեսված չէ: Դրա հետևանքով ցանկացած վիրավորանք, այդ թվում նաև՝ ապտակը, ձեռքերը ոլորելը, միմյանց քաշքշելը որակվում են որպես զինվորական հանցագործություն:

Այդպիսի իրավախախտումները պետք է առաջացնեն կարգապահական, այլ ոչ թե քրեական պատասխանատվություն:

3. ՀՀ քրեական օրենսգրքի 357-րդ, 358-րդ, 358.1-րդ և 359-րդ հոդվածներում ծանր հետևանքների նկատմամբ սահմանվել է մեղքի միայն անզգույշ ձևը (նախկին խմբագրությանը՝ նաև դիտավորության ձևով):

Մինչդեռ որևէ տրամաբանություն չի կարող լինել, քանի որ նույն վնասը դիտավորությանը հասցնելու դեպքում (112-րդ հոդվածի 1-ին մաս) նախատեսվում է ավելի մեղմ պատիժ (3-7 տարի), քան անզգույշությամբ զինծառայողին ծանր վնաս հասցնելու դեպքում (357-րդ և 359-րդ հոդվածներում՝ 4-8 տարի, 358-րդ, 358.1-րդ հոդվածներում՝ 6-12 և 7-12 տարի ժամկետով ազատազրկում):

Վերոնշյալը հանգեցրել է նաև նրան, որ զինծառայողի առողջությանը դիտավորությանը ծանր վնաս պատճառելն այլևս զինվորական հանցագործություն չէ, և արարքը ենթակա է որակման 112-րդ հոդվածի 1-ին մասով (դիտավորությանը առողջությանը վնաս պատճառել):

Այլ խոսքով, փոփոխությունների արդյունքում զինծառայողներին անզգույշությամբ ծանր վնաս պատճառելը խստացվեց, սակայն նույն վնասը դիտավորությանը պատճառելը զինվորական հանցագործություններից հանվեց: Նման դեպքում արարքը, ինչպես արդեն նշվեց, պետք է որակվի ընդհանուր սուբյեկտների համար պատասխանատվություն նախատեսող 112-րդ հոդվածով:

4. Բացի այդ անտրամաբանական է առողջությանը թեթև և միջին ծանրության վնաս պատճառելու համար (358-րդ, 358.1-րդ, 359-րդ հոդվածներ) նախատեսել նույն պատժաչափերը: Նախկինում դրանք հանդիսանում էին հոդվածների տարբեր մասերով նա-



ԼՂՀ դատական իշխանություն

խատեսված արարքներ և սահմանում էին տարբերակված պատժաչափեր:

5. ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի նախկին խմբագրության համաձայն՝ անդամախեղելու համար պատասխանատվություն առաջանում էր այն դեպքում, երբ զինծառայողն այդ եղանակով ծառայությունից ժամանակավորապես կամ ընդհանրապես խուսափելու նպատակ էր հետապնդում:

Վերջին փոփոխությունների համաձայն՝ առողջությանը վնաս պատճառելը՝ անկախ նպատակներից, առաջացնում է ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հատկանիշներ: Վերոնշյալի հիմքում ընկած է այն գաղափարը, որ այդ արարքը կարող է հանգեցնել զինվորական ծառայության կամ դրա առանձին պարտականությունների դադարեցման:

Մինչդեռ հնարավոր են դեպքեր, երբ զինծառայողն իրեն մարմնական վնասվածք է պատճառում հուզական լարվածության, արտաքին միջավայրի հետ կապված դժվարությունների, անձնային առանձնահատկությունների, բռնկվող, անզուսպ բնավորության կամ այլ պատճառներով, որոնք կարող են վկայել հանցակազմի բացակայության մասին:

6. ՀՀ քրեական օրենսգրքի 365-րդ հոդվածը պատասխանատվություն է սահմանում մարտական հերթապահության կամ մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելու համար, եթե այդ արարքը վնաս է պատճառել (նախկին խմբագրությամբ՝ «եթե արարքը վնաս է պատճառել կամ այդպիսի վնաս պատճառելու սպառնալիք է սրեղծել»):

Մինչույն ժամանակ ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնագրքի 33-րդ հոդվածում պատասխանատվություն է նախատեսված նույն արարքի համար (առանց վնաս պատճառելու): Արդյունքում տվյալ հանցագործությունը կարգապահական զանցանքից սահմանազատելը վիճահարույց է դառնում, քանի որ գործնականում դժվար է պարզել, թե որ դեպքում այդ կանոնների խախտումը վնաս է պատճառում, իսկ որ դեպքում՝ ոչ: Օրինակ, եթե մարտական հերթապահություն

կրող զինծառայողը քնում է, ոգելից խմիչք է օգտագործում, զենքը դնում է գետնին, այն փոխանցում է այլ զինծառայողի և այլն, հարց է առաջանում՝ դա հանցագործությունն է, այսինքն՝ վնաս հասցվել է, թե՞ կարգապահական զանցանք է:

7. ՀՀ քրեական օրենսգրքի 375-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում իշխանությունը չարաշահելու, իշխանազանցության կամ իշխանության անգործության համար:

Նշված հոդվածով նախատեսվել է նոր ծանրացնող հանգամանք՝ «*նյութական ծանր հետևանքներ*»: ՀՀ քրեական օրենսգրքի 356-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերում սահմանված է գույքային վնաս հասկացությունը, իսկ «*նյութական վնաս*» եզրույթը բացահայտված չէ: Արդյունքում պարզ չէ, թե ինչպես որակել պետի (հրամանատարի) կողմից ենթակայի նկատմամբ բռնություն գործադրելը, որը հանգեցրել է ինքնասպանության կամ այլ ծանր հետևանքի՝ 375-րդ հոդվածի 3-րդ մասով, թե՞ 358.1-րդ հոդվածի 4-րդ մասով (սանկցիաները միմյանցից էականորեն տարբերվում են):

8. Վերջին փոփոխությունների արդյունքում քրեականացվեցին նոր արարքներ, որոնք ընդհանրապես կապ չունեն զինվորական ծառայության հետ: Այսպես, 357-րդ, 358-րդ, 358.1-րդ հոդվածներում պատասխանատվություն է սահմանվել զինծառայողների մերձավորների նկատմամբ բռնություն կիրառելու կամ դրա կիրառման սպառնալիքի համար, **եթե դա կապված չէ զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ:**

Նման արարքները ենթակա են որակման քրեական օրենսգրքի այլ հոդվածներով և իրենց բնույթով չեն կարող համարվել զինվորական հանցագործություններ (բացառությամբ այն դեպքերի, երբ մերձավորների նկատմամբ բռնությունը կամ դրա սպառնալիքը կապված է տուժող զինծառայողի զինվորական գործունեության հետ):

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում առաջացած այլ վիճահարույց և կագուսային օրինակները կարելի է շարունակել:

2015 թվականի ապրիլի 20-ին նույնաբու-



վանդակ փոփոխություններ և լրացումներ կատարվել են նաև Լեռնային Ղարաբաղի քրեական օրենսգրքում (հավանաբար Հայաստանի իրավակիրառ պրակտիկայում առաջացած վիճահարույց և հակասական հիմնախնդիրները հաշվի չեն առնվել):

Վերոշարադրյալն ամփոփելով՝ կարող ենք փաստել, որ կատարված փոփոխություններն ու լրացումները չեն նպաստում օրենքի միատեսակ ընկալմանն ու կիրառմանը, ինչը դժգոհություն է առաջացնում ինչպես զինձառայողների, այնպես էլ դատավարության մասնակիցների և իրավակիրառ մարմինների շրջանում, հակասում գործող օրենսդրության սկզբունքներին:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում շրջանառության մեջ է դրված նոր քրեական օրենսգրքի նախագիծ:

Ծանոթանալով զինվորական ծառայության սահմանված կարգի դեմ ուղղված հանցագործություններին (բաժին 15, հոդվածներ 475-503), ցավով պետք է փաստենք, որ նախագծում ոչ միայն չեն վերացվել վերոնշյալ հակասություններն ու բացերը, այլ դրանք ավելի են խորացել և իրավակիրառ պրակտիկայում կառաջացնեն բազմաթիվ դժվարություններ:

Մեր եզրահանգումը կարող ենք փաստել հետևյալ հանգամանքներով.

1) *Հոդված 477 Պետրին դիմադրելը կամ նրա օրինակյան գործողությունների իրակասացմանը խոչընդոտելը.*

Բռնություն գործադրելու սպառնալիքը նախատեսված է հոդվածի առաջին մասում որպես հասարակ հանցակազմի հատկանիշներից մեկը,

բռնության գործադրումը (աստիճանը նախագծում կոնկրետացված չէ) նախատեսված է որպես հանցակազմի որակյալ հանգամանք, որի համար պատիժ է նախատեսված՝ ազատազրկում երեքից վեց տարի ժամկետով:

Եթե բռնությունը իր մեջ ներառում է նաև ծանր վնասի պատճառում, ապա այդ դեպքում արարքը բացի 477-րդ հոդվածից լրացուցիչ պետք է որակվի նաև նախագծի 171-րդ հոդվածով (առողջությանը ծանր վնաս պատ-

ճառելը), որի համար նախատեսված է ազատազրկում երեքից ութ տարի ժամկետով:

Այդպիսի կանոն սահմանված է նախագծի 56-րդ հոդվածի 6-րդ կետում, որի համաձայն «Եթե հանցակազմի բաղկացուցիչ մաս է մեկ այլ հանցանքի կատարումը, ապա դրա համար անձը ենթարկվում է առանձին պատասխանատվության միայն այն դեպքում, երբ սույն օրենսգրքով այդ հանցագործության համար ավելի խիստ պատիժ է նախատեսված, քան այն հանցագործության համար, որի բաղկացուցիչ մասն է կազմում տվյալ հանցագործությունը»:

Համամիտ լինելով այս կանոնի հետ, նշենք, որ բռնությամբ զուգորդված զինվորական հանցակազմերը պետք է այնպես շարադրել, որպեսզի ծանր վնաս պատճառելու դեպքում արարքը որակվի միայն հատուկ հանցակազմով, այլ ոչ թե նաև անձի առողջության դեմ ուղղված հանցագործություններով:

2) *Հոդված 478 Պետրի նկատմամբ բռնություն գործադրելը կամ դա գործադրելու սպառնալիքը.*

Հոդվածի երկրորդ մասում պատասխանատվություն է սահմանված պետի նկատմամբ բռնություն գործադրելու, դա գործադրելու սպառնալիքի համար (եթե այն կապված է զինվորական ծառայության պարտականությունները կատարելու կապակցությամբ), որը պատժվում է ազատազրկմամբ երկուսից հինգ տարի ժամկետով:

Անհասկանալի է, թե ինչու ծեծի համար 477-րդ հոդվածում պատիժ է սահմանվում երեքից վեց տարի, իսկ 478-րդ հոդվածում՝ երկուսից հինգ տարի ժամկետով: Այլ խոսքով՝ մի դեպքում արարքը ծանր հանցագործությունների շարքին է դասվում, մյուս՝ համանման արարքը՝ միջին ծանրության:

Բացի այդ, նախատեսված չէ միջին ծանրության կամ ծանր վնաս պատճառելը արարքը որպես որակյալ դարձնող հանգամանք: Ստացվում է, որ եթե պետին հասցվում է այդպիսի վնաս, արարքը ենթակա է որակման՝ հանցագործությունների համակցության կանոններով, ինչը մեր կարծիքով անտրամաբանական է:



ԼՂՀ դատական իշխանություն

3) Նույնպիսի բացթողումներ առկա են նաև նախագծի 479-րդ և 480-րդ հոդվածներում:

Հարկ ենք համարում նշել, որ տուժողին միջին կամ ծանր վնաս պատճառելու դեպքում արարքը հանցանքների համակցությամբ որակելը կհանգեցնի այդ հանցատեսակների արհեստածին աճի, քանի որ կատարված մեկ միասնական զինվորական հանցագործությունը որակելով երկու հոդվածով գրանցվելու է ոչ թե մեկ, այլ երկու հանցագործություն:

4) *Հոդված 482 Ձրախառն կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը.*

Հոդվածի դիսպոզիցիայից երևում է, որ գործառնալ կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը պատասխանատվություն է առաջացնում այն դեպքում, երբ ինքնակամ բացակայության տևողությունը երեք օրից ավելի է: Ստացվում է, որ զինծառայողները կարող են պարբերաբար ինքնակամ թողնել գործառնալ կամ ծառայության վայրը մեկ կամ երկու օր տևողությամբ և դրա համար կրել միայն կարգապահական պատասխանատվություն: Գտնում ենք, որ այս մտեցումը կնպաստի գործառնալ կամ ծառայության վայրը լքելու դեպքերին:

5) *Հոդվածներ 494-497. Հայրուկ ծառայությունների կրնան կարգի դեմ ուղղված հանցագործություններ.*

Վերոհիշյալ հոդվածների ուսումնասիրությունը վկայում է, որ մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու, պահակային կամ կայազորային ծառայության կանոնադրային և ներքին ծառայության կանոնադրային կանոնները խախտելը քրեական պատասխանատվություն է առաջացնում, երբ այդ արարքներն **անզգուշությամբ առաջացրել են ծանր հետևանքներ:**

Հարց է առաջանում, ինչպես որակել վերոհիշյալ արարքները, երբ հետևանքի նկատմամբ հանցավորը դրսևորում է դիտավորություն, և նրա արարքը այլ հանցակազմի հատկանիշներ չի պարունակում: Ստացվում է, որ այս վտանգավոր արարքներն քրեական օրենքով պատժելի չեն:

Չինվորական հանցագործությունների վերաբերյալ ՀՀ նոր քրեական օրենսգրքի նա-

խագծում տեղ գտած բացերն ու անճշտությունները կարելի է շարունակել:

Ամփոփելով վերոգրյալը, նշենք, որ վերանայման կարիք ունեն նաև դատապարտված զինծառայողներին պատժից վաղաժամկետ ազատելու ժամկետները:

Առանձին հանցակազմերի ապաքրեականացման հետ մեկտեղ ՀՀ զինված ուժերի կարգապահական կանոնադրում անհրաժեշտ է նախատեսել նոր կարգապահական զանցանքներ՝ դրանով բարձրացնելով հրամանատարների (պետերի) անմիջական և արդյունավետ մասնակցությունն իրավախախտ զինծառայողներին պատասխանատվության ենթարկելու հարցում: Խոսքը, մասնավորապես, վերաբերվում է զինծառայողին վիրավորանք հասցնելու և այլ դեպքերին, որոնք նպատակահարմար է նախատեսել որպես կարգապահական զանցանքներ:

Այսպիսով, քրեաիրավական և քրեաբանական փաստարկներով չհիմնավորված սանկցիաների խստացումները, նոր արարքների քրեականացումը, մի հանցակազմը մյուսից և կարգապահական զանցանքներից սահմանազատման չափորոշիչների բացակայությունը չեն կարող նպաստել օրենքի և արդարադատության առջև դրված խնդիրների արդյունավետ և արդարացի լուծմանը: 2013 թվականին կատարված և ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծում առաջարկվող փոփոխությունները համահունչ չեն նաև հետխորհրդային և արտասահմանյան քրեական օրենսդրության պրակտիկային:

ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը զինվորական հանցագործությունների վերաբերյալ մի շարք գործերով վերջին տարիներին կայացրել է նախադեպային որոշումներ՝ ինչպես արարքների որակման, այնպես էլ պատժի մատով, սակայն վերը նշված օրենսդրական համակարգային բացերի և հակասությունների պայմաններում դրանք բավարար չեն զինված ուժերում օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու համար: